

առ ո՞վ երթիցէ եղկելի մայր քո: Վա՛յ է ինձ թէ մո՛յ
 մո՛յ սասցից ի ծննդենէ աւուրց մինչեւ ցդոյն հասա-
 կի, թէ զօրօրոցս զգուանաց յիշեցից՝ զզիելս խան-
 դաղատական գորովով, թէ զգուշութիւնս իմ ի հրոյ
 եւ ի ջրոյ, թէ զներբողական գովասանութեան սէրն
 իմ, զիղձ անդրանկութեան լրման հասակին նկատ-
 մունս, թէ զակնկալութիւն յաւուր հարսանեաց խըն-
 դութեան դորա, զյոյս փափաքման պսակին տես-
 լեան, որ յայսմ յամենայնէ հրաժարեալ ի սրտէ՝ խզեալ
 էաք ի բաց եւ քահանայական կարգին միայն ակն ու-
 նէաք ի լրոյ լսել: Բայց վասն դառնութեան սրտիս
 խռովելոյ, զոր ոչ լուայ զլուր կարգին փառաց, այլ
 զընդզիմակ մահն զոր ոչ եթող եւ յայնմ սահմանի
 մնալ եւ զոր ոչ եթող յանդիման աչաց մերոց ճոխալ
 ի տունս մեր: Յորժամ մտանէր ի տուն մեր՝ կարծէի
 արեւով լցեալ սիրտ իմ եւ ճառագայթիւք պարա-
 գրեալ տուն իմ, վասն որոյ զանվաժերն խորհեցայց
 որում ոչ հասեալ տեսի: Զի որո՞վ արդ մայր քո տա-
 ռապեալ պսակեցից զքեզ ականակուռ ստիճանօք
 քեզ վայելչաբար. եթէ ոսկեթե՞լ շար մանտիլօք զըն-
 ծայս զարդ պարանոցիդ տարածեցից. կարմրաներկ
 մատա՞մբս կալեալ զվարսասփիւռ տիպ քո համբուրե-
 ցից, թէ ընդ ազգատոհմն իմ ի պարս կաքաւեալ ցըն-
 ծացայց. յԱմենասրբունի ծնօղի՞ն քո գաւիթ զքեզ
 հրաւիրեցից, թէ ընդ օրիորդս հարսին իմ երգս առեալ
 գովասանական ձայնս յօրինեցից: Ի մուտն քո առ
 բազմորդի ծնօղն քո հոգեւոր՝ Ուրախ լեր սուրբ եկե-
 ղեցի՛ զերգս եկեղեցականա՞ց լուայց. թէ զփեսաւէ-
 րիցն քո տիակցաց Թագաւոր գոլով քո յաշխարհ՝
 զնուագն յարմարումն ունկն եղից: ԶԱրեգականն ար-
 դարութեան ծագումն ի սիրտս մեր հասակակցօք քովք
 ներբողեսցուք, թէ զընթրիս կազմեալ յաւուր ծառիդ
 ծաղկելոյ տեսլեան ընդ սիրելիս մեր խրախոսցուք: